«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» 40 ՏԱՐԻՆ

ՀՀ ԴԱԱ ակադեմիկոս Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» հիմնադրումը 1958 թ., խոշոր իրադարձություն էր խորհրդահայ գիտության և ընդհանրապես հայագիտության պատմության մեջ։ Դա պայմանավորված էր գիտամշակութային և պատմա-քաղաքական մի քանի կարևոր հանգամանքներով։ Խորհրդահայ հայագիտությունը իր շուրջ չորս տասնամյա գոյության ընթացքում հասել էր աննախադեպ հաջողություններ։ Հայաստանում հիմնադրվել էին հայագիտական նոր հաստատություններ (Գիտության և Արվեստի ինստիտուտը, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական բաժանմունքը՝ ԱՐՄՖԱՆ, իսկ 1943-ից՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիան պատմության, գրականության, լեզվի ինստիտուտներով, հին ձեռագրերի հետազոտությունների կենտրոն Մատենադարանը, պատմության պետական թանգարանը իրենց տարբեր մասնագիտական բաժիններով, ինչպես նաև բուհերի տարբեր հայագիտական ամբիոններ), որոնք իրենց շուրջն էին համախմբել Խորհրդային Հայաստանի նշանավոր հայագետ մասնագետներին։ Նրանց ջանքերով ստեղծվել էր հայագիտական մի լայնահուն բազա, որը կարող էր գիտական նորահարույց խնդիրների քննարկմանն ու լուսաբանմանը, բանավեճերի միջոցով նոր հեռանկարների բացահայտմանը և այլն։ Այս պայմաններում հրամայական պահանջ էր առաջացել Հայաստանում ստեղծել հայագիտական նոր պարբերական, որն իր շուրջը համախմբեր թե՛ հանրապետության ու Խորհրդային Միության, թե՛ սփյուռքահայության ու աշխարհի տարբեր երկրների հայագետ մասնագետներին՝ լուծելու հայ գիտության ու մշակույթի առջև ծառացած խնդիրները։

1950-ական թթ. երկրորդ կեսերին, երկրում սկսված քաղաքական ընդհանուր բարեփոխումները նպաստավոր պայմաններ էին ստեղծում գիտությունների, այդ թվում նաև հայագիտության առաջընթացի համար։ Պատմական նման պայմաններում միայն հնարավոր դարձավ իրագործել հայագիտական նոր պարբերականի հիմնադրումը անվանի հայագետների ջանքերով, մասնավորապես Հայաստանի ԳԱ փոխնախագահ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ակտիվ ու նպատակամետ նախաձեռնության շնորհիվ։

1

«Պատմա-բանասիրական հանդեսի» անդրանիկ համարը բացվում էր «Խմբագրության կողմից» հակիրճ նախաբանով, ուր ներկայացված էին հետապնդած ծրագրային նպատակներն ու խնդիրները։ Դրանք ընդհանրացած ձևով հանգում են հետևյալին. ա) հայագիտության մեջ առկա տակավին չլուսաբանված պրոբլեմների մանրազնին ուսումնասիրություն, բազմաթիվ հարցերի արդիականության դիրքերից քննարկում և վերագնահատում. բ) հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, փիլիսոփայության, արվեստի և մշակույթի այլ բնագավառների հարցերի, հայագիտության տեսական խնդիրների մշակում և լուսաբանում, այլ ժողովուրդների հետ հայ ժողովրդի ունեցած քաղաքական, տնտեսական, մշակութային կապերի ուսումնա-

սիրում. գ) Խորհրդային Հայաստանի գիտական և մշակութային նվաճումների լայնահուն լուսաբանում, գիտական վիճահարույց խնդիրների ստեղծագործական քննարկումներ, բնագրերի հրապարակումներ, գիտական նորույթների, լուրերի մասին տեղեկատվական հաղորդումներ և գրախոսություններ. դ) արտասահմանի հայ ընթերցողներին Խորհրդային Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների աշխատանքներին, գիտության, գրականության, արվեստի նվաճումներին ծանոթացում, ինչպես նաև խորհրդային ընթերցողներին արտասահմանյան հայագետների աշխատանքների մասին պարբերական ծանուցումներ. ե) Հանդեսի շուրջը համախմբել խորհրդային և արտասահմանյան առաջավոր հայագետ մասնագետներին և համատեղ ջանքերով զարկ տալ հայագիտության հետագա զարգացմանը, նրա արդիական խնդիրների առաջադրմանն ու լուծմանը։

Ահա ընդհանուր առմամբ նոր հիմնադրված Հանդեսի հետապնդած ծրագրային նպատակների համապատկերը, որը, առաջ անցնելով ասենք, հետագա 40 տարիների ընթացքում Հանդեսի խմբագրությունը իրագործել է հմտորեն և գերազանց մակարդակով։

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ ստեղծված պարբերականի անդրանիկ խմբագրական անձնակազմի մեջ ընդգրկվեցին անվանի պատմաբաններ ու բանասերներ Աշ. Հովհաննիսյանը, Ս. Երեմյանը, Լ. Խաչիկյանը, Բ. Առաքելյանը, Ա. Ղարիբյանը, Ս. Արևշատյանը, Վ. Նալբանդյանը և ուրիշներ։ Հանդեսի գլխավոր խմբագիր հաստատվեց ակադ. Մ. Գ. Ներսիսյանը, որն արդեն 40 տարի անընդմեջ ու մեծագույն նվիրումով ղեկավարում ու ընթացք է տալիս Հանդեսի աշխատանքներին։ Հանդեսի խմբագրական անձնակազմը հետագա տարիներին համալրվում ու թարմացվում է նորանոր անվանի հայագետներով ու արևելագետներով՝ Բ. Պիոտրովսկի, Ի. Աբուլաձե, Վ. Բընդցյանու, Ա. Ղանալանյան, Կ. Ղաֆադարյան, Գ. Ջահուկյան, Էդ. Ջրբաշյան, Գ. Սարգսյան, Գ. Բրուտյան, Պ. Մուրադյան, Ա. Ոսկանյան, Էմ. Պիվազյան և ուրիշներ։ Հանդեսի անդրանիկ հիմնադիր համարը թե՛ իր կառուցվածքով և թե՛ նյութերի թեմատիկ ընդգրկմամբ դարձավ նախադեպային և ծրագրային օրինակ գալիք 40-ամյակում հրատարակված բոլոր 145 հատորների համար։

Հանդեսի առաջին համարը բաղկացած էր հետևյալ բաժիններից. 1. Հոդվածներ, 2. Հաղորդումներ, 3. Բանավեճեր և քննարկումներ, 4. Հրապարակումներ, 5. Գրախոսություն, 6. Ինֆորմացիա՝ բաղադրված Սփյուռքահայ կյանք և Լրատու ենթաբաժիններից։ Այս կառուցվածքը գրեթե նույնությամբ պահպանվեց նաև հետագա համարներում՝ ենթարկվելով միայն որոշ անհրաժեշտ շտկումների և ճշգրտման։

Հանդեսի նյութերը հրատարակվում են հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում հայերեն հոդված-հաղորդումներն օժտված են ռուսերեն ամփոփումներով, իսկ ռուսերենները՝ հայերեն։ Հետագայում հայերեն և ռուսերեն կարևորագույն հոդվածները օժտվեցին նաև անգլերեն կրկնակի ամփոփումով, որի շնորհիվ հրապարակված հոդվածների ընդհանուր բովանդակությունը մատչելի էր դառնում տարալեզու ընթերցողներին։

Պարբերականի առաջին համարում զետեղված նյութերի մեծ մասն ուներ պրոբլեմային բնույթ և կանխանշում էր գիտական այն խնդիրների մոտավոր շրջանակը, որի սահմանագծերում հիմնականում պետք է ընթանային Հանդեսի գալիք հարցադրումներն ու քննարկումները, անշուշտ հարակից նորանոր խնդիրների ընդգրկմամբ և խորացմամբ։

Չմոռանանք, որ խորհրդային հասարակության պայմաններում գիտության, մանավանդ հասարակական գիտությունների նկատմամբ ներկայացվում էին քաղաքական-զաղափարախոսական որոշակի պահանջներ և առանց դրանց բավարարման գրեթե անհնարին էր գործնական որևէ առաջընթաց։ Այս իմաստով Հանդեսը ևս, որպես հասարակագիտական պարբերական, չէր

կարող անմասն մնալ գաղափարախոսական այդ պահանջներից։ Ուստի խմբագրությունը, քաղաքական-գաղափարական հավուր պատշաճությունը պահպանելու նպատակով, հատկապես որոշակի հոբելյանների առիթով, Հանդեսի էջերում տեղ էր հատկացնում նաև նման բնույթի հոդվածների և հրապարակումների։

Առաջին համարում զետեղված են ռուս-հայկական դարավոր հարաբերությունների պատմության հարցի տարբեր կողմերը շոշափող Աշ. Հովհաննիսյանի «Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից» և Մ. Ներսիսյանի «Դեկաբրիստները Հայաստանում 1826—28 թթ.» հոդվածները։ Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության հարցերն էին արծարծված Լ. Խաչիկյանի «XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին» հոդվածում։ Ուշ միջնադարի հայ փիլիսոփայական մտքի գաղափարական միտվածության խնդրին էր նվիրված Վ. Ջալոյանի «XVII—XVIII դարերի հայ փիլիսոփայության ֆեոդալական ուղղության գնահատման հարցի շուրջը» հոդվածը։ Ուշագրավ են նաև՝ Ռ. Դրամբյանի «Հայաստանի բանկարները Մ. Սարյանի արվեստում», Թ. Ավդալբեգյանի «Աբ-ի-Քուրան ջրանցքը Պարսկաստանում և համանուն աբիքուրան հարկը», Հ. Ժամկոչյանի «Պատմա-բանասիրական դիտողություններ Ֆրիկի և նրա տաղերի մասին» հոդվածները, «Կոմիտասի անտիպ նամակները» հրապարակումը։

Մի շարք նոր, բայց խիստ վիճահարույց հարցադրումներով էր հատկանշվում Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում» հոդվածը, որը բուռն վիճաբանություններ հարուցեց ոչ միայն Հայաստանի լեզվաբանների միջավայրում, այլև Խորհրդային Միությունում և արտասահմանում։ Հանդեսի հաջորդ և հետագա տարիների համարներում լայն բանավեճ ծավալվեց այդ հոդվածի շուրջը, որին մասնակցեցին մեր անվանի լեզվաբաններ Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Գ. Սևակը, ինքը՝ Ա. Ղարիբյանը, Ս. Ղազարյանը, Ֆրանսիայից՝ Ֆրեդերիկ Ֆեյդին և Ժան Ֆուրկեն։ Այդ բանավեճը հետագայում առավել լայն ծավալում ստացավ, տեղափոխվեց Մոսկվայում հրատարակվող «Вопросы языкознания» մասնագիտական հանդեսի էջերը, որին հայ լեզվաբաններից բացի մասնակցեցին մի շարք խորհրդային և արտասահմանյան մասնագետներ։ Սա «Պատմա-բանասիրական հանդեսի» գիտական նախաձեռնության միջազգային առաջին լուրջ արձագանքն էր, որը հետագայում երախտագիտությամբ խոստովանեց «Вопросы языкознания» հանդեսի խմբագրությունը՝ հիշյալ բանավեճն ամփոփելով իր խմբագրական հոդվածում։

Ինչպես տեսնում ենք, առաջին իսկ համարից «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում ուրվագծվում էր գիտական այն խնդրառու հարցերի տեսադաշտը, որը գալիքում պետք է դառնար Հանդեսի բուն քննարկումների առարկան։

2

Հանդեսն իր գոյության չորս տասնամյակի ընթացքում դարձել է իսկապես մերօրյա հայագիտության բոլոր ելևէջները արտացոլող մի ճշմարիտ հայելի։ Այդ երևում է ամենից առաջ հայագիտության գրեթե բոլոր մասնաճյուղերի համապարփակ ընդգրկման փաստից, ապա հայագիտությանը սերտորեն առնչվող կովկասագիտական, արևելագիտական և բյուզանդագիտական հետազոտությունների հրապարակումից։ Այդ երևում է նաև հիշյալ ժամանակահատվածում աշխարհի բոլոր ծագերում հայագիտությամբ շահագրգիռ տարբեր ազգության մասնագետների իր շուրջը համախմբելու և նրանց հոդվածները հրատարակելու և տարածելու իրողությունից։

Հրատարակվել են մի քանի հազար հոդված, հաղորդում և գիտատեղեկատվական նյութեր, որոնք վերաբերում են հիմնականում հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների պատմության, հնագիտության, վիմագրության, լեզվի, գրականության, բանահյուսության, ազգագրության, փիլիսոփայության, իրավունքի, արվեստների, ճարտարապետության ամենատարբեր խնդիրների քննությանն ու լուսաբանմանը, ինչպես նաև հայ գիտության ու մշակույթի ականավոր դեմքերին, նրանց թողած ժառանգությանը, Հայաստանում, Սփյուռքում և արտասահմանում կատարված գիտական ու մշակութային կարևոր իրադարձություններին, հայագիտական նոր հրատարակություններին։ Այս ամենը զուգակցվել է հարևան երկրների և ժողովուրդների քաղաքակրթությունների հետ ունեցած փոխադերություններով ու առնչություններով։ Գիտական առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հայ էթնոսի ծագման, վաղ ցեղային կազմավորումների, միջցեղային առնչությունների, հետագայում նաև վաղ պետական միավորումների պատմության կնճռոտ հարցերի նորոգ լուսաբանումները։

Հայաստանի վաղ շրջանի պատմության ուսումնասիրման համար կարևորագույն նշանակություն ունի Ուրարտուի (Վանի թագավորության) պատմության, նյութական ու հոգևոր մշակույթի, լեզվի, էթնիկական կազմի, մանավանդ ուրարտա-հայկական առնչությունների նորովի հետազոտումը, որին պարբերաբար անդրադարձել է Հանդեսը անվանի մասնագետների հոդվածներով, միաժամանակ հակահարված տալով խնդրի հակագիտական շահարկումներին։

Հանդեսի էջերում պարբերաբար քննարկվել է Հայաստանի հին և միջնադարյան շրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի, միջազգային ու միջպետական փոխհարաբերությունների պատմության նոր լուսաբանումների կարոտ խնդիրների մի ամբողջական համալիր, որից հիշարժան են հետևյալները. հայ հին պետականության առաջացման, արքայատոհմերի, նախարարական տների պատմությանն աղերսվող հարցեր, հին Հայաստանի պատմական աշխարհագրության ու տեղագրության, հին և միջնադարյան Հայաստանի դրամաշրջանառության և դրամագիտության, հին հայոց տոմարի, միջնադարյան հայ թագավորությունների, հին և միջնադարյան Հայաստանի քաղաքների և արհեստների պատմության, միջնադարյան Հայաստանի գյուղական համայնքների և գյուղացիության պատմության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների խնդիրներ, արաբական տիրապետության շրջանի Հայաստանի պատմության և մշակույթի, հայ գաղթավայրերի պատմության, հայ-բյուզանդական, հայ-ասորական, հայ-իրանական, հայ-լեհական, հայ-ուկրաինական, հայ-ռուսական, հայ-վրացական պատմամշակութային կապերի և հարաբերությունների, գաղութահայ և սփյուռքահայ համայնքների հասարակական ու մշակութային կյանքի, հայ կրթօջախների, պարբերական մամուլի պատմության, Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտամշակութային կյանքի տարբեր կողմերի հետազոտման խնդիրներ և այլն։

Պատմագիտական հետազոտությունների և հրապարակումների բնագավառում հատկապես բացառիկ է եղել Հանդեսի դերը հայերի ցեղասպանության խնդրի արծարծման և դրա համակողմանի գիտական լուսաբանման, ինչպես նաև հայոց պատմության այլազգի կեղծարարների հակագիտական տեսակետների հերքման և անաչառ քննադատության ուղղությամբ, որի մեջ առանձնակի մեծ է Հանդեսի գլխավոր խմբագրի հետևողական նախաձեռնությունը։

Հանդեսի էջերում պարբերաբար ներկայացվել են ու լուսաբանվել Հայաստանի հնագիտական պեղումների ու հետազոտությունների արդյունքները, քննվել ու մեկնաբանվել է ուրարտական սեպագիր, արամեագիր, լատիներեն, պարսկերեն, արաբերեն և մանավանդ հայ միջնադարյան վիմագիր

արձանագրությունների հարուստ ժառանգությունը, բոլորը կատարված մեր անվանի հնագետների, ուրարտագետների, արևելագետների և վիմագրագետների կողմից։

Ազգագրական ուսումնասիրությունների ուղղությամբ Հանդեսի էջերում տպագրվել են մի շարք ուշագրավ հոդվածներ և հաղորդումներ՝ նվիրված Հայաստանի երկրագործական մշակույթին, բնակարանին, փոխադրամիջոցներին, հայկական տաբազին, հարսանիքին և այլ ծիսատոնական իրողությունների ու հավատալիքների, Հայաստանի սլավոն բնակչության կենցաղին ու սովորույթներին։

Պատմական գիտություններին զուգահեռ Հանդեսը լայն տեղ է հատկացրել բանասիրական գիտություններին, ինչպիսիք են գրականագիտությունը, բանագիտությունը և լեզվաբանությունը։

Հայ գրականության վերաբերյալ ուսումնասիրություններն ընդգրկել են նրա ծագման և զարգացման բոլոր պատմափուլերը՝ սկսած V դարից վերջացրած նոր և նորագույն շրջանի գրականությամբ, հավասարապես տեղ հատկացնելով թե՛ հայաստանյան և թե՛ սփյուռքահայ գրական նշանավոր դեմքերին ու երևույթներին։

Հայ հին գրականության խնդիրներից հանդեսը մասնավորապես անդրադարձել է հայ գրի ու գրականության, հայ գեղարվեստական արձակի գրական մի քանի ժանրերի (վարք, վկայաբանություն) սկզբնավորման, նախամաշտոցյան հայ պատմագրության գոյության, հայ հին թարգմանական գրականությունն, հայ-հունական, հայ-ասորական, հայ-իրանական, հայ-արաբական գրական առնչությունների, հայ հին բանաստեղծության պոետիկայի ու տաղաչափության և այլ հարցերի, ինչպես նաև գրեթե բոլոր գրական նշանավոր դեմքերին, իսկ ավելի հաճախ՝ Մովսես Խորենացու, Եղիշեի, Գրիգոր Նարեկացու և Սայաթ-Նովայի ստեղծագործությունների տարբեր կողմերի լուսաբանմանը։

Հարուստ ու բազմակողմանի է եղել հայ նոր և նորագույն շրջանի գրական դեմքերի ու երևույթների քննության շրջանակը։ Այստեղ առաջնակարգ տեղ է հատկացվել հայ նոր գրականության ժանրերի քննությանը, գրական ու քննադատական հոսանքների պատմությանը, խորհրդահայ բանաստեղծության, դրամատուրգիայի սկզբնավորման, հայ-ռուս, հայ-եվրոպական գրական առնչությունների, առանձին գրողների ստեղծագործությունների տիպաբանական ընդհանրությունների հարցերին։ Քննության ոլորտ են ընդգրկվել արևելահայ, արևմտահայ, խորհրդահայ և սփյուռքահայ գրեթե բոլոր անվանի գրողները՝ նրանց ստեղծագործությունների տարբեր կողմերի գրապատմական, տեսական ու բանասիրական քննություններով, ինչպես նաև նամակների ու արխիվային փաստաթղթերի հրապարակումներով։

Բանագիտական հոդվածներում ու հաղորդումներում քննվել և լուսաբանվել են հայ առասպելաբանության, վիպական ու քնարական բանահյուսության տարբեր ստեղծագործությունների ժանրային-տիպաբանական հատկանիշներ, մշակութաբանական խնդիրներ, գրականության և բանահյուսության փոխառնչությունների, տարբեր ազգագրական շրջաններում գոյատևող բանահյուսության արդի վիճակի հարցեր, հայ բանագիտության պատմության նշանավոր ներկայացուցիչների դիմապատկերներ։

Հանդեսում տպագրված լեզվաբանական հոդվածները, հաղորդումները, տեղեկատվությունները ունեն թեմատիկ լայն ընդգրկում։ Դրանք ամենից առաջ վերաբերում են հայոց լեզվի ծագման ու զարգացման պատմական բոլոր փուլերի (վաղնջահայերեն, հին հայերեն, միջին հայերեն, նոր հայերեն՝ իր երկու գրական տարբերակներով, բարբառներ) հնչյունաբանական, ձևաբանական, բառակազմական, շարահյուսական իրողությունների, քերականական տարբեր կարգերի ու հատկանիշների լեզվաբանական արդի մեթոդներով կատարված նորոգ քննություններին։ Առանձնակի կարևորություն են ներկայացնում հայերենի ցեղակցական կապերի ու լեզվական ընդհանրությունների համեմատական ուսումնասիրումը՝ կապված հին փոքրասիական մեռած լեզուների (խեթալուվերեն, փոյուգերեն, հայասերեն, ուրարտերեն), ինչպես նաև հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող տարբեր լեզուների (հին հնդկերեն, հին հունարեն, իրանական, բալթիկ-սլավոնական և այլն) հետ, հայերենի քերականական ձևերի, բառածանցների ծագումնաբանական և բառարմատների ստուգաբանական քննությունները՝ կատարված հայ և այլազգի նշանավոր մասնագետների կողմից։

Հանդեսը պարբերաբար անդրադարձել է հայ փիլիսոփայական մտքի պատմության տարբեր հարցերին։ Առանձնապես լայն տեղ է հատկացվել հին ու միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի ծագման ու զարգացման էտապների, հիմնական ուղղությունների, հայ նշանավոր մտածողների (Եզնիկ, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Հովհաննես Իմաստասեր, Վահրամ Ռաբունի, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Տաթևացի, Սիմեոն Ջուղայեցի, Ոսկան Երևանցի, Մովսես Բաղրամյան, Արսեն Բագրատունի, Ստեփան Պալասանյան և այլք) փիլիսոփայական հայացքների, ինչպես և հայ առանձին գրողների և արվեստագետների գեղագիտական հայացքների քննությանը։ Հանդեսում բանավեճ է ծավալվել նաև հայ փիլիսոփայության պատմության հանգուցային մի քանի հարցերի տարբեր ըմբռնումների շուրջը (Հ. Գաբրիելյան, Վ. Ջալոյան)։

Հանդեսում քննվել և պատշաճ լուսաբանում են ստացել հայ իրավունքի պատմության մի շարք կարևոր խնդիրներ՝ կապված միջնադարյան Հայաստանի ամուսնաընտանեկան հարաբերությունների, ընտանիքի ձևերի ու իրական գործառույթների, կնոջ իրավական վիճակի, պսակադրության իրավական կարգավորման, քրեական իրավունքի, դատավարության, ինչպես նաև միջնադարյան և Կիլիկյան Հայաստանի միջազգային իրավունքի հետ առնչվող մի շարք ուշագրավ հարցեր։

Լայն ու նորոգ լուսաբանումների են արժանացել հայ արվեստի ու ճարտարապետության բազմաբնույթ խնդիրներ։ Քննությունների ոլորտ են ներառվել արվեստի գրեթե բոլոր ճյուղերն ու բնաբավառները. կերպարվեստից՝ մանրանկարչություն, գեղանկարչություն, քանդակագործություն, կիրառական արվեստներից՝ ոսկերչություն, արծաթագործություն, գորգագործություն, ասեղնագործություն, ապա՝ թատրոն, երաժշտություն, պարարվեստ։

Հատուկ շեշտ է դրվել նախ՝ աշխարհասփյուռ հայ արվեստի հուշարձանների համապարփակ ընդգրկման, հետազոտման, միջազգային աղերսների բացահայտման, ապա՝ հայ ճարտարապետության ու շինարվեստի,

մանրանկարչության, կերպարվեստի, թատրոնի, երաժշտության ու երաժշտագիտության պատմության և տեսության հանգուցային խնդիրների, ինչպես նաև հայ անվանի արվեստագետների կյանքի ու գործունեության ուսումնասիրման և անտիպ ժառանգության հրապարակման վրա։ Այս գործում իրենց արժանի վաստակն են ներդրել թե՛ Հայաստանի ականավոր ճարտարապետ-արվեստարանները և թե՛ արտերկրի հայ և այլազգի մասնագետները։

Հանդեսի էջերում հայ և այլազգի մասնագետների կողմից հրատարակվել են հայերեն և ռուսերեն բազմաթիվ հոդվածներ ու հաղորդումներ՝ նվիրված կովկասագիտական, արևելագիտական, մշակութաբանական և պատմաբանասիրական ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների, որով առավել է ընդլայնվել Հանդեսի գիտական շահագրգռությունների շրջանակը՝ դաբձնելով այն գիտական լայնահուն ընդգրկումների պարբերական։ Այս տեսակետից դարձյալ հարուստ են գրախոսությունների, հրապարակումների և գիտական ինֆորմացիայի բաժինները, ուր պարբերաբար հրատարակվում են աշխարհում հայագիտական, արևելագիտական և ընդհանուր մշակութաբանական արժեք ներկայացնող կարևոր հրատարակությունների մասին մասնագիտական գրախոսականներ, նշանավոր գիտնականների, գրողների, արվեստագետների չհրապարակված նամակներ, աշխատություններ, արխիվային տարբեր բնույթի վավերագրեր, միաժամանակ պարբերաբար տեղեկություններ են տրվում Հայաստանի գիտական կյանքում, Սփյուռքում և արտասահմանյան երկրներում հայագիտությանն ու հայերին վերաբերող կարևոր իրադարձությունների մասին։

3

Հանդեսին տարբեր տարիների իրենց գործուն մասնակցությունն են բերել Անդրկովկասի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդավիայի, եվրոպական, ասիական ու ամերիկյան տարբեր երկրների հայ և այլազգի մասնագետները։

Արտերկրյա հեղինակների համաշխարհային լայն ընդգրկումը մի կողմից վկայում է Հանդեսի միջազգային մեծ ճանաչման, մյուս կողմից՝ նրա բարձր հեղինակության մասին, որն արտահայտություն է գտել նաև տարբեր երկրներից Հանդեսի խմբագրությանը հղված նամակներում և մեծահամբավ գիտնականների՝ նրան տված գնահատականներում։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին Հանդեսի խմբագրությանը 1960 թ. հուլիսի 28-ին հղած իր նամակում Հանդեսը գնահատելով որպես «լրջագույն ակադեմիական ամսագիր»՝ ցանկանում էր միաժամանակ, որ նա «զարգացնի իր սեփական ավանդույթները, զանգ չառնելով այն նվաճումները, որոնցով հռչակված էր եղել հին հայագիտությունը»։

Աշխարհահռչակ գիտնական, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադ. Վիկտոր Համբարձումյանը Հանդեսի հիմնադրման 30-ամյակի առթիվ խմբագրությանն ուղղած իր ուղերձում մասնավորապես ընդգծել է. «Մշտապես բարձր մակարդակի ձգտող «Հանդեսը» դարձել է հայագիտական ծանրակշիռ գիտական օրգան և համընդհանուր ճանաչում է ձեռք բերել մեր երկրում և նրա սահմաններից դուրս։ ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը նշում է նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի 30-ամյա արդասավոր գործունեությունը «Հանդեսի» անընդմեջ գլխավոր խմբագրի պաշտոնում»։

Հանդեսի ընդհանուր գիտական ու պատմական նշանակությունը տարբեր ձևով են գնահատել հայ մեծանուն գիտնականներն ու մտավորականները։ Ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը Հանդեսի հրատարակության տասնամյակի առթիվ տպված իր հոդվածում գրում է. «Հանդեսի հրատարակումը իրադարձություն էր հայ գիտական պարբերական մամուլի տարեգրության մեջ։ Նման պատկառելի հասարակական-քաղաքական ամսագրեր չեն եղել հայ պարբերական մամուլի պատմության մեջ»։

Ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը Հանդեսի 25-ամյակին նվիրված հոդվածում թվարկելով նախորդ հայ գիտական պարբերականները՝ իրավացիորեն նշում է, որ «այս բոլոր հրատարակությունների մեջ «Պատմա-բանասիրական Հանդեսը» բացառիկ տեղ է գրավում իր հրապարակումների գիտական մակարդակով և բաղմակողմանիությամբ։ Դժվար է նրա կողքին դնել մի ուրիշ գիտական պարբերական, որն ունենար տարիներ շարունակվող և խորացող այդքան ամբողջական դիմանկար, այդքան լայն ընդգրկում և հեղինակների ցանկ»։

Հայաստանի գրողների միության վարչության նախագահ Վ. Պետրոսյանը Հանդեսի գլխավոր խմբագրին 1984 թ. հոկտեմբերի 1-ին ուղղած գրության մեջ նշել է. «Ձեր գլխավորած Հանդեսը հայ գրողները գնահատում են իբրև մեր ժողովրդի պատմության, մշակույթի արմատական պրոբլեմները արծարծող ամենալուրջ, գիտական-պրոֆեսիոնալ նախանձելի մակարդակի հրատարակվող Հանդես»։

Վենետիկի Մխիթարյան միաբանության հայր Սահակ Ճեմճեմյանի կարծիքով՝ Հանդեսն «իրապես պարծանք մըն է ամբողջ հայության մեջ իր լրջությամբ»։ Իսկ բուլղարահայ մտավորական, վաստակաշատ մանկավարժ Ս. Փաչաճյանի համողմամբ՝ «այստեղակ մանրազնին և խոր ուսումնասիրությամբ շարադասված սքանչելի Հանդեսը միայն ու միմիայն պետականացած ժողովուրդների գործ է։ Մենք անցյալում նմանօրինակ Հանդես չենք ունեցել ոչ Հայաստանում, ոչ էլ արտասահմանում»։ Ֆրանսահայ անվանի մտավորական Լևոն Մեսրոպը Հանդեսի պատմական նշանակությունը գնահատել է բոլորովին այլ առումով. «Հիանալի գաղափարը ունեցած եք,—գրել է նա Հանդեսի խմբագրությանը,—«Հանդես»-ին մեկ մասը հատկացնելով Սփյուռքի մշակութային կյանքին և գրողներուն։ Կամրացնեք մեր միջև եղած կապը և կը քաջալերեք Սփյուռքի առաջադիմական հոսանքները»։

Սփյուռքահայ անվանի մտավորական Հակոբ Սիրունին նշել է. «Պատմա-բանասիրական հանդեսն» էր, «որ կոչվեցավ հայագիտության խարիսխը դառնալ և ցոլացնել աշխատանքները, որոնք տեղի կունենան պատմական և բանասիրական հետազոտությանց բոլոր մարզերուն մեջ, բոլոր մյուս օրգանները օժանդակ ունենալով իրեն»։

Օքսֆորդի Բոդլեյան գրադարանի տնօրինությունը Հանդեսի առաջին երկու համարների ստացման կապակցությամբ գրում է. «Մենք գտնում ենք, որ այն մեր գրադարանի ամենահետաքրքիր և ամենաարժեքավոր համայրումն է և անհամբեր սպասում ենք հետագա համարների ստացմանը»։

Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, մեծանուն արևելագետ Վ. Մինորսկին այսպես է գնահատել Հանդեսի ծնունդը. «Շնորհակալություն ինձ ուղարկած Հանդեսի համար, որի խմբագրությանը ջերմորեն շնորհավորում եմ։

Նա անմիջապես գտել է իր ճանապարհը։ Հատկապես շնորհակալություն եմ հայանում ռուսերեն ամփոփումների համար»։

Հանդեսի մասին կարծիքներ են հայտնել և գնահատականներ տվել մի շարք եվրոպական անվանի գիտնականներ, որոնց թվում է. Շյուցը, Ժ. Վայտենբերգը, Հ. Վ. Պոլլը և ուրիշներ։

«Պատմա-բանասիրական հանդեսն» այսօր դարձել է աշխարհում ամենահեղինակավոր հայագիտական պարբերականը։ Հայագիտությունն այսօր անհնարին է պատկերացնել առանց «Պատմա-բանասիրական հանդեսի»։ Այժմ, մեր ազգային անկախ պետականության պայմաններում, երբ նորանոր խնդիրներ են ծառանում հայագիտության առջև, «Պատմա-բանասիրական հանդեսի» դերը ավելի քան կարևորվում է։

Վերջում մի ցանկություն. անհրաժեշտ ենք համարում «Պատմա-բանասիրական հանդեսի» 40 տարվա մատենագիտական ցանկը հրատարակել առանձին գրքով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն։

Հուսով ենք նաև, որ մեր Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և հանրապետության կառավարությունը իրենց հովանու տակ կառնեն Հանդեսը՝ ապահովելու համար հայագիտական այդ նշանավոր պարբերականի հետագա անխափան հրատարակությունը։

«ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКОМУ ЖУРНАЛУ» СОРОК ЛЕТ

Академик НАН РА В. Б. БАРХУДАРЯН,
доктор филол. наук С. Б. АРУТЮНЯН

Резюме

Первые же номера «Историко-филологического журнала», вышедшие в 1958 г., стали событием научной жизни республики. Журнал был основан по инициативе и при активнейшем участии видного ученого, вице-президента АН Армении, академика М. Г. Нерсисяна, который в течение сорока лет и поныне успешно руководит работой журнала. Журнал был призван освещать на своих страницах вопросы истории, литературы, философии, языка, искусства и культуры армянского народа, общетеоретические вопросы историографии, общей филологии и арменистики, вопросы политических, экономических и культурных связей армян с другими народами. Все 40 лет своего существования (вышло в свет 145 номеров) «Историко-филологический журнал» отличался высоким научным уровнем публикуемых материалов, современной и острой постановкой вопросов и проблем. Сосредоточив вокруг себя лучших специалистов-арменоведов, кавказоведов и востоковедов как Армении и России, так и ученых из диаспоры и разных стран мира, «Историко-филологический журнал» стал самым авторитетным изданием научной периодики в современной арменистике. Всемирноизвестный ученый, президент АН Армении В. А. Амбарцумян, поздравляя «Историко-филологический журнал» с 30-летием, писал: Постоянно стремящийся к высокому уровню Журнал стал весомым научным арменоведческим органом и получил всеобщее признание в нашей стране и за ее пределами. Президиум АН Армении также отмечает плодотворную 30-летнюю деятельность академика АН Армении М. Г. Нерсисяна—бессменного редактора «Историко-филологического журнала».

40 YEARS OF THE „PATMA-BANASIRAKAN HANDES"

Academician of the NAS of the RA V. B. BARKHUDARIAN,
Doctor of Philolog. Sciences S. B. HAROUTUNIAN

Summary

Just the very first issue of the „Patma-Banasirakan Handes" published in 1958 became an event in the scientific life of Armenia. The journal was founded by M. G. Nersissian, academician, vice-president of the Academy of Sciences of Armenia, an outstanding scientist, initiative and active participant, who has been successfully heading the work of the journal for 40 years so far. The journal was called for to reveal questions of history, literature, philosophy, language, art and culture of the Armenian people, general theoretical questions of historiography, general philology and armenistics, questions of political, economic and cultural connections of the Armenians with other nations. During the 40 years of its existence (145 issues) the „Patma-Banasirakan Handes" was distinguished by its scientific level of the publishing material, its modern and sharp statement of the questions and problems. Having the best specialist-armenologisis, specialists of Caucasus and orientalists of Armenia and the Soviet Union as well as the scientists of Diaspora and of different countries with itself, the „Patma-Banasirakan Handes" became the most authoritative edition among the scientific periodicals of the modern armenistics. Congratulating the 30th anniversary of the „Patma-Banasirakan Handes" V. A. Hambartsumian, president of the Academy of Sciences of Armenia, a well-krown scientist all over the world wrote: „Permanently aspiring to a high level the journal became an essential scientific organ and got worldwide fame in our country and beyond it. The presidium of the Academy of Sciences of Armenia also mentions the 30th anniversary of the academician of the Academy of Sciences of Armenia M. G. Nersissian's fruitful activity as permanent editor of the „Handes",